Республика Армения ООО
«НАХАГЦЕРИ
ПОРДЗАКННУТЮН»

Republic of Armenia
«NAKHAGTSERI
PORDZAQNNUTYUN» LLC

Հայաստանի Հանրապետություն
«ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

---

N 10-08/25-1
05.11.2025 թ.
**Լիցենզիա ՔՊԼ-001139**
**Լիցենզիա ՔՊԼ-001434**

**Պատվիրատու՝** Ծաղկահովիտի համայնքապետարան
**Նախագծային կազմակերպություն՝** «ՎԱՆԱՁՈՐԻ ՆԱԽԱԳԾՈՂ» ՍՊԸ
**Տնօրեն՝** Վ. Վեքիլյան

# ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ Արագածոտն մարզ,Ծաղկահովիտ համայնքի Բերքառատ բնակավայրի գերեզմանատան ցանկապատում

Երաշխավորվում է ՀՀ Արագածոտն մարզ,Ծաղկահովիտ համայնքի Բերքառատ բնակավայրի գերեզմանատան ցանկապատման աշխատանքների նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին: Նախահաշվային արժեքը կազմում է 40948.22 հազ. ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

ՏՆՕՐԵՆ Ա.ԾԱՏՈՒՐՅԱՆ

Նախագծման հիմք են ծառայել՝

- Նախագծման թույլտվություն

Փորձաքննության է ներկայացվել նախագիծ կազմված 2 ալբոմից

.

Գիրք 1- Ճարտարապետաշինարարական մաս

Գիրք 2- Նախահաշիվ

<u>**Ճարտարապետաշինարարական մաս**</u>

Հ.Հ. Արագածոտն մարզի Ծաղկահովիտ համայնքի Բերքառատ բնակավայրի գերեզմանատների ցանկ պատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը և մշակումը կատարվել է համայն- քապետարանի պատվերի և նախագծման առաջադրանքի հիման վրա: Հաշվի է առնված նաև նաև պատվիրատուի դիտողություններն ու առաջարկությունները:

Նախագծի կատարման համար օգտագործվել են հետևյալ նորմատիվային փաստաթղթերը.

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.12.2020թ N102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04-2020 Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերե շինարարական նորմերը»,

- ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.03.2014թ N87-Ն հրամանով հաստատված«ՀՀՇՆ 20-06-2014 Շենքերի եւ կառուցվածքների վերակառուցում, վերականգնում եւ ուժեղացում. Հիմնական դրույթներեշինարարական նորմերը»,

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 10.12.2020թ N95-Ն հրամանովհաստատված «ՀՀՇՆ 31-03—2020 «Հասարակական շենքեր եւ շինություններե շինարարական նորմերը»,

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 29.06.2022թ N14-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-03.03-2022 «Վարչական եւ կենցաղային շենքերի շինարարական նորմերը,

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 20.05.2022թ N10-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04-2022«Տանիքներ եւ տանիքածածկեր» շինարարական նորմերը,

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 26.08.2022թ N21-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» շինարարական նորմերը»,

- ՀՀ քաղաքաշինության նախարարի 10.11.2006թN253-Ն հրամանովհաստատված «ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի եւ շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համարե շինարարական նորմերը»,

- ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ N128-Ն հրամանը»,

- ՀՀ կառավարության 19.03.2015թ «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների եւ այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու եւ ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N596-Ն

որոշումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գերեզմանատների շուրջը բացակայում է ցանկապատ և նիչ կառույցներ անհրաժեշտություն է առաջացել առաջացել ցանկապատել գերեզմանատների տարածքը: Տարածքը շրջափակ- և այլ պաշտպա- վում է մետաղական ցանկապատով, երկու գերեզմանատան պարագծով, որոշակի տեղերում տեղադրելով դարպաս- ներ և դռնակներ:

Նախագիծը կատարվել է ղեկավարվելով և հղում կատարելով ՀՀՇՆ 30-01-20-23 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատումե, ՀՀՇՆ 13-032022 «Կրող և պատող կոնստրուկցիա- ներե, ՀՀՇՆ 53-01-2020 «Պողպատե կոնստրուկցիաներե, ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկան շինարա- րությունումե և ՀՀՇՆ 30-02-2022 «Տարածքի բարեկարգումե շինարարական նորմերին:

Ըստ չափաբաժնի Նախագիծն իր մեջ ընդգրկում է հետևյալ աշխատանքները:

1.Նախատեսվում է իրականացնել մետաղական ցանկապատի կառուցում 1683.0 մետր, իսկ դարպասներով և դռնակով 1693.0 գծմ:

2. Հողային աշխատանքներ

3. Ցանկապատի տեղադրում բետոնացումով:

Նախատեսվում է գերեզմանատան ցանկապատվող տեղամասի ամբողջ պարագծով համահարթեցնել բնահողի մակերևույթը 1693.0 մետր երկարության: Ցանկապատի կանգնակների համար ընտրվել է քառակուսի կտրվածքով մետաղական խողովակ 80x80x 80x80x4 մմ որոնք բետոնացվում են 3.0մ երկարության թռիչքով և 400ճ400ճ900 մմ չափերով հիմքում: Ցանկապատի ամբողջ երկայնքով նախատեսվում է կառուցել խամքարաբետոնե գոտի որը տեղա- դրվում է 10սմ խորության հիմքում և ունի 30սմ լայնություն և 30սմ բարձրություն: Դարպասների կանգնակների համար ընտրվել է 140x140x4 մմ չափերի քառակուսի կտրվածքով մետաղական խողովակ, դարպասների առանց- քային երկարությունը 4.0մ է: Դռնակների շրջանակների համար օգտագործվում է 50x50x2.5մմ չափերի քառակուսի կտրվածքով մետաղական խողովակ, որը մետաղական ծխնիներով միացվում է ցանկապատի և դարպասի կանգ- նակներին, նույն անալոգով դարպասի շրջանակը միացվում է դարպասի կանգնակներին:

Դարպասի բարձրությունը 0.00 նիշից 2.0մետր է, իսկ ցանկապատի բարձրությունը, ինչպես նաև դռնակի բարձ- րությունը 1.80մետր է: Բոլոր մետաղական խողովակները վերևի կողմից եռակցման միջոցով փակվել են մետաղե թերթով անձրևաջրերի ներթափանցումը կանխելու նպատակով: Շրջափակման համար ընտրվել է մետաղական ցանց Φ 3 մմ Bp 50x50մմ բնութագրով: Ցանցը վերևի կողմից և կողքերից շերտապողպատի օգնությամբ և եռակցման միջոցով ամրացվում է շրջանակին և կանգնակներին, իսկ ներքևից 15սմ խորասուզվում է բետոնե- տոնե գոտու մեջ: Բետոնը B-12.5 դասի է: Բոլոր մետաղական կոնստրուկցիաները, բացի չժանգոտվող մետաղա- կան ցանցից, ներկել երկշերտ յուղաներկով:

<u>Նախահաշիվ</u>

Նախահաշիվը կազմված է աշխատանքային նախագծի ծավալների հիման վրա և համաձայն ՀՀ կառավարության 23 հունիսի 2011 թվականի N 879-Ն որոշման : Հաշվարկման հիմք են հանդիսանում 1984 թ. գները և նորմերը, որոնց վրա կիրառվել են հետևյալ գործակիցները`

| | |
|---|---|
| - Հիմնական աշխատավարձ | 2.45844 |
| - Մեքենաների շահագործում | 3.0481 |

Նյութերի գները վերցված են ՀՀ ֆինանսների նախարարության 07.2025 թ. ինֆորմացիոն տեղեկագրից, նրանց վրա կիրառելով հետևյալ գործակիցները`

| | |
|---|---|
| - Նյութերի տեղափոխման ծախսեր | 1,0679 |
| - Այլ նյութեր | 1,05 |
| - Պահեստավորման ծախսեր | 1,02 |
| Միջին ամսեկան աշխատավարձի չափ է ընդունվել | 266126 դրամ |
| Նախահաշվում հաշվարկված է նաև` | |
| - Վերադիր ծախսեր | 13,3% |
| - Շահույթ | 11% |
| - Ա.Ա.Հ | 20% |

Նախահաշվում հաշվարկված են նաև համապատասխան լիմիտավորված ծախսեր:

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նյութերը «Նախագծերի փորձաքննություն» ՍՊԸ-ն նշում է , որ՝

1. Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան:
3. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները այլընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կամզակերպության հետ համատեղ:

Ելնելով վերը նշվածից «Նախագծերի փորձաքննություն» ՍՊԸ-ի փորձաքննությունը ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է, Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՍՏԱՏՄԱՆ:

Փորձագետ Ա. Հարությունյան